

խաւարը դեռ ևս անթափանցելի է. դպրոց չունին: Նիւթական միջոցներից զուրկ և հազիւ իրենց կենսական պիտոյքները հոգացող գիւղացիներին հարկաւ տնքան էլ չի կարելի մեղադրել, որ չեն հասկանում ուսման նշանակութիւնը և իրենց զաւակներին թողնում իրենց պէս անկիրթ, բայց ինչ ասենք այդ գիւղից սերուած և Թիֆլիզում փարթամ կեանք վարող ու մեծ գիրք ունեցող Արղութեան Երկայնաբազուկներին, որ տարեկան միքանի հարիւր մանէթ ծախսելով՝ գոնէ միգասետն դպրոց չեն պահել իրենց հայրենի օջաղում: Ինչ ասենք մեր հոգեւոր վարչութեանը, որ մի վանական դպրոց անգամ չի պահում այնտեղ, ուր երբեմն ճեմարաններ են եղել և աստուածաբանութեան նշանաւոր ուժեր դասախօսել...

III.

ՊԱՏՄԱԿԱՆ ՏՆՆԻԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գուգարաց աշխարհի մասին շատ բան չենք գտնում մեր գաստիկան մատենագրութեան մէջ. այս երկիրը սկզբում լիջւում է իբրեւ Գուգարաց բզեշխութիւն և ապա իբրեւ Բագրատունեաց իշխանական կայուածք. լիջւում է նաև որպէս հանգստարան կամ գերեզմանատուն Բագրատունի թագաւորների:

Աշոտ-Ողորմած Բագրատունի արքայի անգրանիկ որդի Սմբատն երբ ժառանգում է Բագրատունեաց հարստութեան գահը՝ Անին, նրա երկրորդ որդի Աբասը ըմբոստանալով իր հօր և եղբօր դէմ՝ կազմում է Կարուց անկախ թագաւորութիւնը: Որպէս զի կրտսեր որդի Գուրգէնն էլ իր եղբօր պէս ըմբոստանալով խռովութիւններ չլարուցանէ, Աշոտ-Ողորմածը տալիս է նրան Գուգարաց աշխարհը, ուր նա մնում է իբրեւ անկախ իշխան և մեռնելուց յետոյ թաղւում Սանահնի վանքում, Սուրբ Աստուածածնայ եկեղեցու երևելեան որմի տակ-

արտաքուստ: Այս իշխանի կամ թագաւորի մասին ուրիշ ոչինչ չեն հաղորդում մեզ պատմագիրները:

Գուրգէնին յաջորդում է իր որդի Դաւիթ Անհողինը, որ նստում է Գուգարաց աշխարհի Շամշուղէ Բերդում. սա քաջ մարդ լինելով՝ պատերազմներ է մղում, իր ձեռքն է ձգում Աղուանից աշխարհը և կոչւում է Աղուանից թագաւոր: Սա ևս վախճանուելուց լետոյ թաղւում է Սանահնում, իր հօր կողքին:

Դաւիթ Անհողինն յաջորդում է իր որդի Կիւրիկէն, որ նոյնպէս Աղուանից թագաւոր է կոչւում. սա իր արքայական գահը հաստատում է Լօռուայ բերդում և մեռնելուց յետոյ թաղւում է Հաղբատի վանքում:

Թէ արդեօք Գուգարաց աշխարհի իշխանութիւնը Կիւրիկէից լետոյ ի՛նչ վիճակ ունեցաւ, մինչև ե՛րբ մնաց իրւեանկախ իշխանութիւն, ոչինչ յայտնի չէ. մեր մատենագիրներն այնուհետև այլևս ոչինչ չեն հաղորդում այդ իշխանութեան մասին: Յայտնի է միայն, որ մի առ ժամանակ վրաց իշխանութեան ներքոյ ընկաւ և Իւանէ ու Ջաքարէ հայ իշխանների օրերով մի փոքր խաղաղ էր: Յետոյ արդէն երևի այդ նահանգն էլ, ամբողջ Հայաստանի պէս, վայրենի ցեղերի ոտից կոխան եղաւ և ավերուեց. նոյն իսկ այժմ դեռ ևս կենդանի ծերունիների պատմելով իրենք էլ ականատես են եղել լեզգիների խմբական յարձակման, որ շարունակ ավերել, թալանել ու կողոպտել են երկիրը:

IV.

ՍՍՆԱՀՆԻ ՎԱՆՔԸ

Այս՝ իր ժամանակին մեծ հռչակ ունեցող վանքի հիմնարկութեան մասին տարբեր տեղեկութիւններ են հաղորդում մեր մատենագիրները. ոմանց ասելով՝ վանքը շինուել է տասերորդ դարում, Բագրատունեաց Աշոտ Ողորմածի և Թագուհի Խոսրովանուշի ձեռներեցութեամբ. ոմանք էլ մե-